## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **11 մարտի 2026թ.**

2026թ. փետրվարի 17-ից մարտի 11-ը ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Սարգսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Կ. Ենկոյան՝ | ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, ԵՊԲՀ «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի գլխավոր գիտաշխատող, նեյրոգիտության լաբորատորիայի ղեկավար, |
| Կ. Ֆերեշետյան՝ | ԵՊԲՀ «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի նեյրոգիտության լաբորատորիայի գիտաշխատող, կենսաքիմիայի ամբիոնի դասախոս: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Սարգսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների և ընթացակարգը կասեցված հայտարարելու մասին:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ № Մ-19313
«11» 03 2026 թ.

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվարի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 12:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Ձեբրածկան կենսունակությունը և վարքագիծը գնահատող համակարգ | 70,831,900.00 | 2026-02-18 12:00:00 | 70,832,000.00 |
| 2 | Ձեբրածկան պահպանման համակարգ՝ լրակազմով | 57,225,900.00 | 2026-02-18 12:00:00 | 57,226,000.00 |
| 3 | Արդյունաբերական լվացքի մեքենա | 30,027,400.00 | 2026-02-18 12:00:00 | 36,033,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԻՄՊԵՔՍՈ ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՄԱՐԳԱՐՅԱՆ Փ., Շ 23, Բն. 22 ԲՆ | impexso.company@gmail.com | 01322649 |
| 2 | allcompny | Hasce | barcabarca@mail.ru | 125685694 |

2026թ. փետրվարի 18-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

«Իմպեքսում» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղմամբ հայտարարագիրը ներկայացված է 2025 թվականին, սակայն պետք է ներկայացված լինի 2026 թվականի համար, ինչպես նաև հայտով ներկայացվող առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի փաստաթղթում.

- «Ձեբրաձկան կենսունակությունը և վարքագիծը գնահատող համակարգ» չափաբաժնի «1.7 Շերեփուկների դիտարկման խցիկ՝ տեսախցիկով և ներդրված լուսային բլոկով» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Դիտարկման խցիկում տեսախցիկի հեռավորությունը պետք է լինի օբյեկտից *ոչ պակաս, քան 30 սմ*՝ առանց պարալաքս խնդիրների կամ օկլյուզիաների 96 տեղանոց պլանշետներում», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Դիտարկման խցիկում տեսախցիկի հեռավորությունը պետք է լինի *օբյեկտից 30 սմ-ից պակաս* օբյեկտից, առանց պարալաքս խնդիրների կամ օկլյուզիաների 96 տեղանոց պլանշետներում», ինչպես նաև «1.10 Մանրադիտակ՝ տեսախցիկով» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Միջակնային ճշգրտում Siedentopf-ի չփոխհատուցվող մեթոդով՝ 55-75 մմ», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկականն բնութագրում ներկայացվել է՝ «Միջակնային ճշգրտում\gemel առանց փոխհատուցման Zidentop-fa,՝ 55-75 մմ»:
- «Ձեբրաձկան պահպանման համակարգ՝ լրակազմով» չափաբաժնի «1.3 Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ ֆիլտրեր, պահեստային մասեր, աքսեսուարներ» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Արտեմիայի ցիստեր՝ 1 կգ», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Ծովախեցգետնի կիստաներ՝ 1 հատ» ձևակերպումը:
- «Արդյունաբերական լվացքի մեքենա» չափաբաժնի «1.3 Կոնստրուկցիա/Նյութեր» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ Արտաքինը՝ չժանգոտվող պողպատ՝ AISI 304 Scotch Brite finish Ra<40μin (Ra<1.2μm) տեսակի կամ համարժեք: Լվացքի խցիկը և դռները AISI 316L BA Ra<30μin (Ra<0.8μm) տեսակի պողպատից են կամ համարժեք, իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ Արտաքինը՝ չժանգոտվող պողպատ՝ AISI 304 Scotch Brite finish Ra «40μin (Ra«1.2μm): Լվացքի խցիկը և դռները AISI 316L BA Ra «30μin (Ra«0.8μm) տեսակի պողպատից են, ինչպես նաև «1.14 Շրջակա միջավայր» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է «Համարժեք աղմուկի ճնշման մակարդակ՝ < 70 դԲ (A)», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Համարժեք աղմուկի ճնշման մակարդակ՝ « 70 դԲ (A)» ձևակերպումը (<-ի փոխարեն կիրառվել է « նշանը):

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿԱՍԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվարի 18-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | ԻՄՊԵՔՍՈ ՍՊԸ | 70,832,000.00 | 70,831,900.00 | 0% | 70,831,900.00 | 70,831,900.00 | 0% | 70,831,900.00 |
| | allcompny | | 1,500,000,000.00 | 0% | 1,500,000,000.00 | 1,500,000,000.00 | 0% | 1,500,000,000.00 |
| 2 | ԻՄՊԵՔՍՈ ՍՊԸ | 57,226,000.00 | 57,225,900.00 | 0% | 57,225,900.00 | 57,225,900.00 | 0% | 57,225,900.00 |
| | allcompny | | 1,500,000,000.00 | 0% | 1,500,000,000.00 | 1,500,000,000.00 | 0% | 1,500,000,000.00 |
| 3 | ԻՄՊԵՔՍՈ ՍՊԸ | 36,033,000.00 | 30,027,400.00 | 20% | 36,032,880.00 | 30,027,400.00 | 20% | 36,032,880.00 |
| | allcompny | | 1,500,000,000.00 | 0% | 1,500,000,000.00 | 1,500,000,000.00 | 0% | 1,500,000,000.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 3-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

«Իմպեքսո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով 2026թ. մարտի 11-ին Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգը հայտարարել կասեցված մինչև ուսումնասիրության ավարտը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Սարգսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Ենկոյան ____________

Կ. Ֆերեշետյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________